որ՝ Պարոնտէրի ժամանակ հաւանաբար 1619ին նուէր կը ղրկէ զայն Ս. Յակոբի վանքին հեռաւեալ յիշատակարանի համաձայն, «որ տուեց գրել իւր հալալ արդեամբն, իւր հոգւոյն և իւր ծնողացն Շահրուզին և իր մօրն Մարիամին, տըւեց յիշատակ ի դուռն լուսաբուղխ սբ. Գերեզմանին և Ս. Յակոբին, ձեռամբ տէր Ղուկաս արքեպսին. որ տանէ դա ի ձեռն սբ. Երուսաղիմայ առաջնորդին տէր Գրիգոր արքեպիսկոպոսին...»։ (Խաչ. Ցուց. տետր. ԻԲ. էջ 1665)։

ՍՏԵՓԱՆՈՍ ԵՊՍ. ԵՒԴՈԿԻԱՑԻ.— Մբ. Փոխանորդ, 1810ին ականատես կ'ըլլայ Կարնոյ մէջ Դըւնիկցի Վառվառի կոյսին, եղբօրը Գասպարին և Կարնեցի Մարիամ կնոջ նահատակութիւններուն. եպս. կը ձեռնադրուի 1811ին. Նա. Կարնոյ, Կարսի և Պայազիտի. կը վախճանի 1815ին։

ՍՏԵՓԱՆՈՍ ԵՊՍ. ԻԶՄԻՐՑԻ.— Զո. 1740ին. Ա. Էնկիւրիի (1753—1780). եպս. կը ձեռնադրուի 1754ին. ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը (1775—76)։

ՍՏԵՓԱՆՈՍ ԵՊՍ. ՆՈՐ — ՋՈՒՂԱՑԻ. — Ա. Նոր-Ջուղայի 1684ին. 1710ին ուխտաւորութեամբ կը գտնուէր Ս. Յակոբի վանքը ուրկէ նոյն թուականին գրով կը յորդորէր Աղա Մաթոսը Ս. Յակոբի ուխտի գալ և նոյն վանքը իր ծանր պարտքէն ազատել. իր թուղթին սկիզբն է այս. «Փիր գրեալ յուխտէն Երուսաղէմայ առ պրն. Աղա. մանաւանդ ընդ քև կցորդեալ հոգևոր և մարմնաւոր ազգացեղաց ի պատրաստի գտեալ իշխանաց և տօլվաթաւորաց, մեծամեծաց և սինլքորաց, օտարականաց և տեղացեաց» և այլն. վերջը. «Գրեցաւ ի դրան Ամենափրկչի վանաց ի թուին ՌՃԾԹ (=1710). յամսեանն Ապրիլի ԻԷ. ի դրան Սրբոյն Յակոբայ վիճակին ամենայն հայոց» (Սրգս. Ցուց. Բ. Հատ. էջ 1244)։ Այս թուականը սակայն սխալ կը թուի, վասն զի Ստեփանոս վախճանած է բանտին մէջ 1698ին Նահապետ կթղ.ի և իր միջև տեղի ունեցած կթղ.ական խնդիրներու պատճառաւ։ Ստեփանոս եպս.ի կաթողիկոսութեան և կենսագրութեան մասին տեսնել (Նոր Ջուղա. Բ. Հատ. էջ30—32)։

ՍՏԵՓԱՆՈՍ ԵՊՍ. ՍԱՆՏԱԼՃԵԱՆ, ՊՐՈՒՍԱՑԻ.— Մբ. Ս. Էջմիածնի. Ծ. 1836ին. Զո. 1861ին. եպս. կը ձեռնադրուի 1868ին. անհրաման կը մեկնի Հռոմ 1875ին. ուխտաւո-